ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Թումանյանի <<Անուշ>> պոեմի ուսուցումը

Ուսուցչուհի՝ Ֆլորա Թոսունյան

(անուն, ազգանուն)

/«Մեծ Սեպասարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ/

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ Ա Թումանյանի «Անուշ» պոեմի գործնական ուսուցման կազմակերպման նկարագրություն.....9

Գլուխ Բ «Անուշ » պոեմի կերպարների ուսուցումը.....16

Բ.1 Դասի օրինակելի պլան.....18

Եզրակացություն.....22

Օգտագործված գրականության ցանկ.....23

Ներածություն

Հանրակրթության պետական կրթակարգով և միջնակարգ կրթության պետական չափորոշչով նախատեսված եռամյա ավագ դպրոցը, մի կողմից, սովորողի առաջ բաց է անում գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման և դրանց գործնական կիրառման նոր հնարավորություններ, մյուս կողմից՝ մանկավարժությանը և մասնավորապես հայոց լեզվի ու գրականության դասավանդմանը առաջադրում է նոր խնդիրներ և դրանց լուծման համար անհրաժեշտություն: Նոր այդ մոտեցումներից առավելապես կարևորվում են՝ մոտեցումների մշակման.

1. Ուսուցման բովանդակային կողմին առաջադրվող նոր պահանջներ, որոնց կատարումը կապահովի հայոց լեզվից և հայ գրականությունից հիմնավոր գիտելիքների ձեռքբերումը և դրանց կիրառական-գործնական յուրացումը, միջին դպրուցում սովորողների ձեռք բերած հմտությունների ու կարողությունների և արժեքային համակարգի վերջնական ձևավորմանը և ամբողջացմանը, ինչպես նաև նրանց ստեղծագործական ունակությունների զարգացումն ու մշակումը:
2. Նոր դասագրքերի կառուցվածքի մշակում և ուսումնական օժանդակ նյութերի համալրում:
3. Մեթոդական նոր ուղեցույցների ու հանձնարարականների մշակում:
4. Պարտադիր ու կամընտրական առարկաների ու թեմատիկ դասընթացների նոր
5. համամասնության մշակում:

Ուսումնական գործընթացում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում:

Ավագ դպրոցում «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» ուսումնական առարկաների բովանդակությունը սահմանելիս պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով ու նկատառումներով՝

ա. Ավագ դպրոցի բոլոր հոսքերի ուսումնական համակարգում հայոց լեզուն և հայ գրականությունն առանձնահատուկ տեղ ունեն մի կողմից՝ որպես աշխարհաճանաչողության, անձի զարգացման, նրա մտավոր առաջընթացի, հոգեբանական կարգերի զարգացման հիմնական միջոց, մյուս կողմից՝ ուսումնական մնացած բոլոր առարկաների ընկալման, յուրացման, գնահատման և արժևորման նախադրյալ:

բ. Հայ գրականության ուսուցումը մեծապես նպաստում է լեզվական գիտելիքների յուրացմանն ու գործնական կիրառմանը: Կարևոր նաշանակություն ունի անհատի համակողմանի զարգացման ու գեղագիտական դաստիարակության գործին:Հայ գրականության երկերի հերոսների և կերպարների հոգեբանական վերլուծությունները հնարավորություն կտան հասկանալու և ճիշտ գնահատելու մարդկանց, սրա հիման վրա էլ կնպաստեն մարդկանց հետ հաղորդակցվելու, շփվելու և համագործակցելու կարողությունների մշակմանը:

գ. Հայոց լեզվի և հայ գրականության ուսուցումը նպաստելու է սովորողների մտքերի, զգացմունքների ու ապրումների առավել հստակ ու ճշգրիտ արտահայտմանը:

դ. Հայ գրականության ուսուցումը ավագ դպրոցում պիտի իրականանա որպես հայ գրականության պատմության ուսումնասիրության դասընթաց, որի նպատակը և ելակետը կլինեն մայրենի գրականության զարգացման ընթացքի, գրողի և ժամանակաշրջանի փոխհարաբերության, գրական ուղղությունների և դպրոցների ուսումնասիրությունը:

ե. Հայ գրականության ուսումնասիրությունը սովորողի բառապաշարի հարստացման, պատկերավոր մտածողության, երևակայության ստեղծագործական կարողությունների զարգացմանը և գրական ճաշակի ձևավորմանը զուգընթաց աշխարհաճանաչողության, ինքնաճանաչման, ինքնագնահատման ու ինքնակատարելագործման արդյունավետ միջոց է և մեծապես նպաստում է բարձր բարոյական գծերի արմատավորմանը:

զ. Հայ գրականության ուսուցումը պետք է նպաստի ազգային գեղարվեստական մտածողության յուրահատկությունների բացահայտմանը, հայ ժողովրդի պատմական ճակատագրի և հայ մարդու կերպարի մարմնավորման ընկալմանը, ավանդույթների շարունակականությանը, գրողի և նրա ստեղծագործության հասարակական նշանակության գիտակցմանը:

Հայ գրականության ծրագրերով առաջարկվող նյութերի ուսումնասիրությունը պետք է կապել այսօրվա կյանքին, բխեցնել սովորողների նախասիրություններից, ցույց տալ բոլոր ժամանակներում մարդկային կրքերի բախումներ՝ բարու հաղթանակով, մարդկանց

ճակատագրեր՝ հերոսական կամ դրամատիկ, պայքար հանուն վսեմ գաղափարների, ընդգծել դրանց արդիական հնչեղությունը...

Հետազոտական աշխատանքի նպատակները

Ավագ դպրոցում «Հայ գրականություն» առարկայի դասավանդման նպատակը գրական ստեղծագործությունների ուսումնասիրությունն է, որի ընթացքում սովորողներին համակարգված գիտելիքներ են հաղորդում հայ գրականության պատմության, տեսության, նշանավոր հայ գրողների կյանքի ու գործի վերաբերյալ, ձևավորում են քննադատական վերաբերմունք, գրական երկերը համարժեքորեն ընկալելու, վերլուծելու, գնահատելու, իմաստի մեջ թափանցելու, տվյալ գրական երկում այսօրվա ոգուն համապատասխան երևույթներն առանձնացնելու, հերոսների արարքների հոգեբանական հիմքերը նկատելու և հիմնավոր պատճառաբանություններ տալու կարողություններ: Ըստ այդմ՝ ավագ դպրոցում հայ գրականութան դասավանդումը ներառում է հետևյալ խնդիրները՝

- ուսումնական ծրագրերի մեջ ընդգրկված հայ և արտասահմանյան հեղինակների գործերի իմացություն,
- գրական հիմնական սեռերի ու ժանրերի, գրական ուղղությունների ու դպրոցների, դրանց հիմնական ներկայացուցիչների մասին որոշ տեղեկությունների իմացություն,
- պատկերավորման ու արտահայտչական միջոցների իմացություն.
- գրական ստեղծագործությունը գնահատելու, կերպարները վերլուծելու, երկի կառուցվածքը, գաղափարական ու գեղարվեստական արժանիքները բացահայտելու կարողությունների մշակում և ամրապնդում,
- գրական ստեղծագործությունների և արվեստի այլ տեսակների միջև զուգահեռներ անցկացնելու, ինքնուրույն դատողություններ, եզրահանգումներ կատարելու կարողության ամրապնդում գրական թեմաներով շարադրանքներ, ռեֆերատներ, փոխադրություններ գրելու գրական-գեղարվեստական հանդեսներ, բանավեճեր, քննարկումներ կազմակերպելու և դրանք անցկացնելու կարողությունների կատարելագործում:

Ուսումնական գործընթացի տեսակները

1. Անհատական գործունեություն
2. Խմբային գործունեություն
3. Զույգերով գործունեություն
4. Խաղային գործունեություն

Կիրառվող մեթոդները

1. Մտագրոհ
2. Խմբային հետազոտություն
3. Հերեսներին բնութագրող աղյուսակ
4. Հարցազրույց
5. Ստեղծագործական աշխատանք

Հովհաննես Թումանյանի «Անուշ » պոեմը ընդգրկված է 11-րդ դասարանի «Հայ գրականություն» առարկայի ծրագրում:

Ուսուցանվող նյութը - Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմը, ժանրային առանձնահատկությունները, կառուցվածքը, նախերգանքը և վերջերգի դերը, պոեմի բովանդակությունը, կերպարները, տաղաչափությունը, լեզվական առանձնահատկությունները:

Ուսուցման նպատակը - Գրական երկերի գաղափարական բովանդակությունն ընկալելու և մեկնաբանելու կարողություն, կերպարների հոգեբանական բնութագիրը ներկայացնե- լու, նրանց արարքները մեկնաբանելու, ,նրանց հասկանալու և կարեկցելու ունակության զարգացում, պատկերավորման միջոցների դերի ընկալում և մեկնաբանելու կարողություն: Գրական կերպարների խոսքը քննելու ,դրա մեջ նրա բնավորությունը բացահայտելու կարո-ղություն:

Ուսումնական գործունեությունը - Գրականության և արվեստի այլ տեսակների համեմատական քննություն, գրական երկի հիման վրա ստեղծված օպերաների, թատերական ներկայացումների դիտում և քննարկում:Գրական երկի նկարազարդումների, գրական ստեղծագործության նյութերով կերպարվեստի գործերի դիտում, քննարկում և համեմատական վերլուծություն: Դասեր Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում:

Վերջնարդյունքներ - Աշակերտը կկարողանա ներկայացնել «Անուշ» պոեմի ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունները ,վերարտադրել դիպաշարը,

- բացատրել կոնֆլիկտի զարգացման ու հասունացման դրդապատճառները, ներկայացնել նրա լուծումը ,
- վերլուծել կերպարները, հիմնավորել կերպարների հոգեբանական զարգացումը,
- ցույց տալ նահապետական բարքերի կործանարար ազդեցությունը հերոսների ճակատագրի վրա,
- մեկնաբանել բնության նկարագրությունների դերը պոեմում,
- մեկնաբանել տաղաչափությունը և պատկերավորման միջոցների ընտրությունը պոեմում։

Գլուխ Ա

«Անուշ» պոեմի գործնական ուսուցման կազմակերպման նկարագրություն

Մինչև «Անուշի» ուսումնասիրումը աշակերտները դեռ միջին դասարաններում գաղափար են կազմում պոեմի մասին՝ որպես քնարաէպիկական երկի, և անցնում են այդ գրական տեսակի մի շարք նմուշներ՝ Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» և այլն:

Պատասխանելով ուսուցչի հարցին՝ աշակերտները բացատրում են, որ Հովհաննես Թումանյանը այդ պոեմներով պատկերել է հայ գյուղի կյանքը, շինականների դժվարին աշխատանքն ու ծանր գոյավիճակը: Այնուհետև, ուսուցիչը, խուսելով «Անուշ»-ի մասին, նախ նշում է, որ այդ պոեմը Հ. Թումանյանի ստեղծագործության գլուխգործոցն ու հայ բանաստեղծության զարդապսակն է և համաշխարհային գրականության գանձերից մեկը, ապա հակիրճ ծանոթություն է տալիս նրա վերաբերյալ: «Անուշ»-ի նյութը վերցված է հայ հին, դեռ նահապետական կենցաղով ապրող գյուղի կյանքից: Բանաստեղծը պոեմում պատկերում է գյուղացիների ապրելակերպը, կենցաղը, սովորույթները, հավատալիքները, մտածումները, ապրումները, ձգտումներն ու երազանքները, ինչպես նաև հայրենի բնաշխարհն իր լեռներով, կիրճերով, անտառներով, գետերով, և այլն: Դրա հետ միասին, նա, մի կողմից, բացահայտում ու քննադատում է հայ գյուղի խոցերն ու արատները, նահապետական կյանքի հետամնացությունը, խավարամոլությունը, մյուս կողմից, դրվատում է այդ միջավայրից վեր խոյացող և խեղդուկ կապանքներին հակադրող հերոսներին, նրանց մարդկային բարձր արժանիքները, երգում է անաղարտ ու հավերժացող սերը, որ գեղեցկացնում ու ազնվացնում է մարդու հոգին, դառնում նրա իսկական երջանկության աղբյուրը:

«Անուշ» պոեմի հարուստ բովանդակությանը համապատասխանում է նրա բանաստեղծական արվեստը, բազմազան հնարքները : Նրանում ջրաշատ գետի պես հուժկու թափով հորդում են, միահյուսվում ու իրար հերթագայում և՛ քնարական զեղումներ, և՛ վիպական դրվագներ, և՛ նույնիսկ թատերական բնույթի տրամախոսություններ, կիրառվում են գեղարվեստական խոսքի պատկերավորության ու արտահայտչականության բազմազան միջոցներ, տաղաչափական մի շարք հնարանքներ:

Այդ ամենի շնորհիվ պոեմում հին նահապետական գյուղաշխարհը արտացոլվում է իր բոլոր կողմերով:

1908թ-ին Կոմիտասը փորձում է «Անուշ»-ի հիման վրա գրել օպերա, բայց հանճարեղ երաժիշտը՝ վատառողջության պատճառով չի կարողանում ավարտել սկսած շնորհակալ գործը: Հաջողությամբ է պսակվում անվանի երաժշտագետ Արմեն Տիգրանյանի փորձը:

Հաղթահարելով ահագին դժվարություններ՝ նա գրում է «Անուշ» օպերան և առաջին անգամ

1912 թ-ին այն բեմադրվում է Ալեքսանդրապոլի թատրոնում:

Իր ներածական խոսքից հետո ուսուցիչը, աշակերտներին, որպես տնային առաջադրանք հանձնարարում է կարդալ «Անուշ» պոեմը: Աշակերտները հաճախակի լսում են «Անուշ» օպերայի երգերը, հնարավորության դեպքում դիտում են «Անուշ» օպերան կամ առանձին մասերի բեմականացումը: Աշակերտները սովորում են պոեմը կարդալ արտահայտչորեն և հասկանում են նրա բանաստեղծական հնարանքները:

«Անուշ»-ի նախերգանքն ամբողջությամբ կարդալուց հետո աշակերտները նշում են, որ նրա դեռ սկզբնական հատվածում արդեն կանխազգացվում է դժբախտ սիրահարների սիրո ողբերգական վախճանը.

Եկե՛ք, քույրեր, սեգ սարերի չքնաղագեղ ոգիներ,

Եկե՛ք ջահել սիրահարի սերը ողբանք վաղամեռ:

Ուսուցչի կողմնորոշող խոսքից հետո աշակերտները կարդում ու պարզաբանում են պրեմի առաջին գլխի սկզբնական հատվածները (1, էջ 3):Բանաստեղծին հեռու, օտար քաղաքից, ուր իշխում են փողն ու կեղծիքը, կանչում է հայրենի չքնաղ երկրի անհուն կարոտը: Վերադառնալով իր հայրենի երկիր՝ բանաստեղծը տեսնում է իրեն ծանոթ կանաչ սարերը, մտաբերում է այն երջանիկ գետն ու սիրելի դեմքերը, որոնք արդեն անցել են գարնան ծաղկունքի ու հերվա ձյան պես, բայց անչափ հարազատ են ու անմոռաց, ուստի նրանց է դիմում այս սրտաբուխ խոսքերով.

Ողջո՛ւյն ձեզ կյանքիս անդրանիկ հուշեր,

Որբացած հոգիս ողջունում է ձեզ…

Պոեմի առաջին երգի մնացած հատվածները (4-1) գերազանցապես երգեր են ու տրամախոսություններ, որոնցում արտահայտվում են Սարոյի և Անուշի սիրային ջերմ, սրտաբուխ զգացումներն ու թախծոտ ապրումները:

Այդ պատճառով աշակերտները դրանք կարդում են արտահայտչորեն՝ բացատրելով միայն որոշ կտորներ: Սարոն տոչորվում է Անուշի սիրով, երգում է, նրան երազում:Անուշը լսում է Սարոյի երգը, խելամաղ է լինում, ուզում է թռչել նրա մոտ, բայց պառավ մայրը թույլ չի տալիս.

Հանգիստ կաց,Անու՛շ,դու հասած աղջիկ,

Ինչ ունես ջահել չոբանների մոտ…

Եվ Անուշը հենց առաջին խոչընդոտից կարծես գուշակում է իրենց մրո տխուր վախճանը: Տխուր կանխազգացումներ են արտահայտված նաև աղջիկների («Ամպի տակից ջուր է գալիս») և հենց իր՝ Անուշի («Ասում են ուռին») երգերում:

Վերջացնելով պոեմի առաջին գլխի մեկնաբանումը՝ ուսուցիչը աշակերտներին բերում է այն հետևության, որ նրանում դեռևս ոչ բացահայտորեն իր արտահայտությունն է գտնում նահապետական գյուղաշխարհի և նրանից վեր բարձրացող անհատների, հետամնաց սովորույթների և վեհ, վսեմ զգացումների միջև եղած հակասությունը:

Պոեմի երկրորդ երգը բաղկացած է ընդամենը երկու հատվածից՝ դարձյալ մեծ մասամբ երգերից: Աշակերտները այդ գլուխը և կարդում են արտահայտչորեն և մեկնաբանում մի քանի կարևոր կտորներ, երգում են երգերը: Երկրորդ երգի սկզբում պատկերվում է կենցաղային մի տեսարան՝ համբարձման տոնը, երբ աղջիկները երգելով «Համբարձման յայլա» –ն, վիճակ են հանում Անուշին սև վիճակ է ընկնում, որից խիստ ազդվում է Անուշը: Ընկերուհիները փորձում են նրան մխիթարել, այնինչ Անուշը, առանձնանալով նրանցից, ողբում է իր դառն ճակատագիրը:

Երրորդ երգում նկարագրվում է մի այլ հետաքրքրական կենցաղային տեսարան և պատմվում շատ կարևոր դեպք: Այդ գլուխն ընթերցելուց հետո աշակերտները այն վերարտադրում են համառոտակի, բայց բնագրին շատ մոտ:

Ձմռան մի գիշեր հարսանքատեղում է գյուղի ամբոխը, սարերից գյուղ են իջնում նաև պատանի հովիվները՝ աղջիկ տեսնելու, պարի ու կռիվի մասնակցելու: Փչում է զուռնաչին կռիվի եղանակ, ասպարեզ են բերում Սարոյին և Մոսիին: Ընկերները մարտնչում են, բայց մեկը մյուսին գետին չի խփում, որովհետև մութ ձորերում, նահապետական՝ գյուղաշխարհում հնուց մնացած ադաթ է լինում, որ ամբոխի առջև իգիթն իրավունք չունի ընկեր իգիին վայր գցել գետին:

Սարոն, նկատելով Անուշին, մոռանում է սովորույթը, ընկեր ու աշխարհ, գետնում է Մոսիին ու չոքում վրան:

Մոսին կայծակնահար դուրս է գալիս աղմկալի հարսանիքից, արյուն է կաթում նրա սևակնած սրտից, գնում է քայլամոլոր ու խոսում ինքն իրեն.

-Ամոթ քեզ, Մոսի՛, թուք ու նախատինք,
Ամո՛թ քեզ նման գոված իգիթին,
Մի անունդ հիշիր ,մի բոյիդ մըտիկ,
Դեռ քո թիկունքը չէր տեսել գետին

Այսպիսով, հարսանքատեղում, պատահած դեպքից հետո ընկեր տղաները դառնում են ոխերիմ թշնամիներ: Անկոտրում Մոսիին ուրիշ բան չի մնում անել, քան վրեժ լուծել Սարոյից: Սարոյի համար սիրած աղջիկը թանկ է ամեն բանից: Նրան նույնպես մնում է մի ելք՝ փախցնել Անուշին: Այդ պատճառով ավելի է սրվում բախումը՝ երկու հակառակ կողմերի միջև: Չորրորդ երգը բաղկացած է հինգ հատվածներից որոնցում առանց վիպական մանրամասների ու քնարական շեղումների պատմվում են պոեմի հյուսվածքի համար կարևոր մի քանի դեպքեր: Աշակերտներն այդ գլուխը ևս ընթերցում են ամբողջությամբ և մասամբ բացատրում, մասամբ էլ վերարտադրում պատկերավոր կերպով, բնագրին հարազատ: Ամպերը ուղտերի նման դանդաղ բարձրանում են ձորից, Չաթինդաղ լեռան քարքարոտ թիկունքից արևը նոր է հանում իր պռունգը, և ահա բնության այդ զարթոնքի պահին արթնանում է գյուղը, բոլորը փնտրում են Անուշին ու Սարոյին, բայց չեն կարողանում գտնել: Մոսին մնում է հանդերում, երդվում առանց վրեժը լուծելու չվերադառնալ գյուղ: Անուշը, մի օր խառնված քաղվոր կանանց, շորերը պատռված հոր տուն է վերադառնում: Ամենքից հալածված ու առանց Անուշի մնացած Սարոն տրտմագին դիմում է իրեն վշտակից սարերին և նրանց պատմում իր դարդն ու ցավը: Նա նույնիսկ որոշում է ինքնասպան լինել, սակայն դարձյալ մտածում է սիրածի մասին, վախենում, որ իրենից հետո նա կմնա աչքը լալով, կդառնա վշտահար ու սգավոր:

Իր այդ վսեմ, վեհ, նվիրական զգացմամբ Սարոն վեր է բարձրանում նահապետական հետամնաց միջավայրից, դառնում հավերժող սիրո հերոս: Հինգերորդ երգի ընթերցումից հետո աշակերտները շատ համառոտակի վերարտադրում են ի յուզիչ պատկեր:

Անուշը որպես տարած, ետ բերած աղջիկ դուրս է արվում հայրական տնից: Անուշը, լսելով Սարոյի մահվան լուրը, կորցնում է գիտակցությունը:

Ձորից դուրս է գալիս մարդասպան Մոսին՝ մոլոր քայլերով, այլայլված դեմքով: Պապանձվում է ամբոխը, ոչ ոք չի համարձակվում ծպտուն հանել: Միայն Սարոյի մայրն է հարա՛յ կանչում ու վազում դեպի որդու դիակը՝ երեսը պոկելով: Նա խնդրում է որդուն գեթ

մի անգամ բացել աչքերը, խոսել: Սարոյի ընկերները փոս են փորում գետի ափին և հողին հանձնում նրա դիակը: Ադ համընդհանուր վշտին համազգաց է լինում ծեր Դեբեդը, ծառերն ու ծաղիկները .

Ծառ ու ծաղիկ սվսվալով բույր խնկեցին դուրեկան,

Ծեր Դև-Բեդն էլ ահեղ ձայնով երգեց վսեմ շարական:

Աշակերտները, կարդալով վերջին՝ վեցերորդ երգը, նրա որոշ մասերը վերարտադրում են դարձյալ բնագրին մոտ, որոշ մասերն էլ պարզաբանում են սեղմ, հակիրճ կերպով: Գարուն է, սարեր ու ձորեր ծաղիկ են հագել: Գետի եզերքին Անուշը մոլորված շրջում է Սարոյի շիրմի շուրջը: Մի անցորդ, հանդիպելով Անուշին, ջանում է մխիթարել նրան, համոզում է պաղ ջուր ածել անբախտ սիրածի շիրմին, գնալ նոր սեր անել:Անուշը օրհնում է անցորդին, ցանկանում է նրան ուրախ սրտով վայելի սիրո քաղցրությունը, բայց ինքը՝ ստիպված է միշտ լաց լինել,որովհետև դա է տիրոջ կամքը: Չկա Անուշի սիրելին, նա գնացել է հեռու, գնացել է անվերադարձ, ուստի կյանքը դատարկվել է իր համար: Անուշը մահ է գտնում գետի ալիքներում: Այլ կերպ ասած՝ նա ևս, հանուն մաքուր, անբիծ ու նվիրական սիրո, գրում է իր կյանքն ու դառնում հավերժող սիրո հերոսուհի:

Աշակերտներին վերընթերցել տալով պոեմի վերջին երկու տունը՝ ուսուցիչը նրանց ուշադրությունը բևեռում է այն հանգամանքի վրա, որ եթե երկրորդ երգում նկարագրվում է համբարձման առավոտը, հատկապես՝ վիճակահանությունը, ապա վերջերգում պատկերվում է համբարձման գիշերը, այն հրաշալի, երջանիկ պահը, երբ բացվում են ոսկի երկնքի դռները, ներքևում պապանձվում է, լռում ամեն բան, և երկնքի անհուն խորքերից անմուրազ մեռած սիրահարների աստղերը թռչում, իրար են գալիս և աշխարհից հեռու, լազուր կամարում համբուրվում իրար հետ:

Այսպիսով՝ դաժան ու խավար աշխարհում թեպետ խորտակվում են ողջ էությամբ միմյանց սիրող սրտերը, բայց և այնպես անբասիր սերը մնում է անմահ:

«Անուշ» պոեմի մեկնաբանման ժամանակ առաջանում են լրացուցիչ պարզաբանումներ պահանջող հարցեր: Օրինակ՝ պոեմում Անուշի մահվան վերաբերյալ ոչինչ չի ասվում ուղղակիորեն: Մինչդեռ ենթադրվում է, որ նա իրեն զցում է գետը: Պատասխանելով այդ հարցին՝ ուսուցիչը նշում է, որ «Անուշ»-ը պրեմ է, և որպես այդպիսին, չի պարունակում վիպական կանխանշումներ, որոնց հիման վրա կարելի է հասկանալ բաց թողած պահերը: Այսպես՝ առաջին երգում Անուշն ու Սարոն իրենց սիրո

մասին առաջին անգամ խոսում են աղբյուրի մոտ, սակայն նրանց ջերմ խոսքերը ենթադրել են տալիս, որ նրանք իրար սիրելիս են եղել ավելի վաղ: Չորրորդ գլխում ոչինչ չի ասվում: Սարոյի և Անուշի փախուստի մասին, դա իմացվում է ծերունու պատմածից: Կամ հինգերերդ գլխում ամենևին չի նկարագրվում Սարոյի սպանությունը: Դա էլ իմացվում է գյուղում տարածված մահագույժ լուրից: Ճիշտ այդպես էլ վեցերորդ երգում չի նկարագրվում Անուշի մահը, բայց գետի կանչը՝ Արի՛, Անո՛ւշ, արի՛ տանեմ յարիդ մոտ, ենթադրել է տալիս, որ նա իրոք մահ է գտնում իրեն վշտակցող ալիքներում: Այս թեման ուսումնասիրելիս ուսուցիչը կիրառում է ժամանակակից մեթոդներ, որոնց շնորհիվ մատուցվող նյութը հյութեղ ու հետեքրքիր է դառնում: Կարելի է կիրառել՝ մտագրոհ, խմբային հետազոտություն, տեքստային աշխատանք, ինքնուրույն ստեղծագործական աշխատանք, կենսագրական բանաստեղծություն, ուղղորդված ընթերցանություն, հարցազրույց, բանավեճ և այլն:

Վերջինիս կիրառության ժամանակ աշակերտները բավական աշխուժորեն վիճում են Մոսիին ու նրա հորը բնութագրելի, ոմանք նրանց դատապարտում են, ոմանք՝ արդարացնում, պաշտպանում այն աստիճան, որ Սարոյի արարքը համարում են տմարդություն: Ոմանք էլ, ընդհակառակն, արդարացնում են Սարոյին՝ նրա արարքը համարելով վայրկենական ոգեշնչման, ինքնամոռացման հետևանք: Ի վերջո թեթևացնում են Մոսիի ու նրա հոր նկատմամբ խխիստ վերաբերմունքը: Նրանք թեև կառչած են հին, հետամնաց սովորույթներին, բայց չունեն չարություն, ապրում են հոգեկան ծանր պահեր, մեկը կորցնում է աղջկան, մյուսը՝ քրոջն ու ընկերոջը: Այլ կերպ ասած՝ նրանք նույնպես ապրում են խոր ողբերգությունը

Եզրափակելով աշակերտների բանավեճը՝ ուսուցիչը՝ հանձնարարում է գրել շարադրանք՝ «Եթե Անուշը ապրեր մեր օրերում» վերնագրով:

Գլուխ Բ

«Անուշ» պոեմի կերպարների ուսուցումը

ԱՆՈՒՇԸ: Գեղջկական պարզ, գեղեցիկ բնավորությամբ օժտված այդ աղջիկը նահապետական աշխարհի հարազատ զավակն է: Նա երևում է ջրի ճանապարհին՝ սիրո և կարոտի երգը շուրթին, Համբարձման առավոտը՝սիրո տագնապը հոգում, բախտի հավատով: Գեղջկական կենցաղը նրա հոգում ծնել է պարզություն: Թումանյանն ստեղծել է մի հոյակապ բնավորություն, բացահայտել է ժողովրդի հասարակ զավակի հոգու պոեզիան, օժտել նրան անկրկնելի գեղեցկություններով:

Անուշը զարգացող կերպար է , նրա հոգեկան ապրումները գործողության ընթացքում վերաճում են խորունկ դրամայի:Այդ պարզ ու զուլալ աղջիկը սիրո ողբերգության մեջ մե-ծանում է և բարձրանում միջավայրից: Սերը հոգու առանձնահատուկ վիճակ է ,որը մեծ ուժով է արտահայտված Անուշի կերպարի մեջ: Դրա համար էլ նա չի կարող հետևել աշ-խարհի կարգին, մխիթարվել և նոր սեր անել: Նա այլևս չի կարող ապրել <<պաղ ու տխուր>> կյանքում և զոհում է իր կյանքը՝ վիշտը խառնելով Դեբեդի ալիքներին:

ՍԱՐՈՆ: Նույնպես ողբերգական մի հերոս է, որն ապրում է ծանր դրամա: Սարոն միտումնավոր չի գետին զարկում ընկերոջը: Ընկերախաղի ժամանակ տեսնում է Անուշին և մի պահ մոռանում է ադաթն ու սովորույթը: Մեծ է մենակ մնացած Սարոյի վիշտը: Հալածված ընկերոջ ու մարդկանց կողմից՝ նա իր ցավին հաղորդակից է դարձնում միայն բնությանը: Սարոն մեռնում է՝անձնազոհ սիրո զգացմունքը սրտում:

ՍԱՐՈՅԻ ՄԱՅՐԸ: Գեղարվեստական հզոր պատկեր է Սարոյի թաղման տեսարանը, ուր առանձնանում է մոր կերպարը: Պառավ նանը նույնպես աստվածավախ, հավատացյալ ու սնոտիապաշտ կին է: Բայց վիշտը ցնցում է նրա հոգին, որդու կորստյան ցավը ջնջում է այդ ամենը: Ծնվում է հուժկու բողոքը. նա հանդուգն անեծքով ծառս է լինում « դուշման երկնքի դիմաց» հայհոյում է ու կուրծքը ծեծում , քանի որ Սարոն նրա արևն է, աշխարհն առանց Սարոյի նրա համար գիշեր է: Մոր համար որդու կյանքը թանկ է իր կյանքից ,առ-հասարակ, մայրական սերն ու վիշտը հավերժական են:

ՄՈՍԻՆ ՈՒ ՀԱՅՐԸ: Նրանք նահապետական միջավայրի հարազատ զավակներն են՝ հա-վատարիմ հնոց ադաթին ու սովորույթին: Երկուսն էլ չար մարդիկ չեն:

Բայց նահապետական օրենքները խոր կնիք են դրել այդ մարդկանց վրա: Ի՞նչ կլիներ Մոսիի վիճակը, եթե վրեժ չլուծեր : Նա կդառնար պատվազուրկ ու կորած մի

մարդ։ Ահա թե ինչու է նա սպանում ընկերոջը, կործանում քրոջ կյանքն ու երջանկությունը։ Միջավայրն անսիրտ է դարձրել նաև հորը։ Նա տնից դուրս է անում «տարած –ետ բերած» աղջկան, որը «գետնովն է տվել » հայրական օջախի ու եղբոր պատիվը։ Այդ մարդիկ չեն հասկանում իրենց արարքների նշանակությունը, սիրելով հանդերձ՝ դժբախ-տություն են բերում հարազատներին։

Դասի օրինակելի պլան

Առարկան- Հայ գրականություն

Թեման՝ Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմը: Կերպարները (կարելի է տրամադրել 2 դասաժամ

Դասարանը՝ 11-րդ

Նպատակները

1. Ակադեմիական

Աշակերտները կիմանան

ա)գրական կերպարի վերլուծության սկզբունքները,

դ) գրական երկից քաղված փաստերի օգնությամբ հերոսին բնութագրելու

առանձնահատկությունները.

աշակերտները կկարողանան՝

ա/ գրական երկից գտնել տվյալ հերոսի արտաքինն ու բնավորությունը ներկայացնող հատվածները

բ) ընկալել հերոսի ապրումները, հասկանալ երան

գ) բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել և բնութագրել տվյալ հերոսին

2.Սոցիալական

ա) ըմբռնել մարդու հոգեբանությունը, վարժվել ապրումակցման,

բ/վարժվել համագործակցության և հաղորդակցման

գ/ դրսևորել հանդուրժողականություն և փոխըմբռնում դասընկերների հակադիր կարծիքների դեպքում

Ուսումնական նյութեր՝ Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի տպագիր օրինակներ, Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի սկավառակը, «Անուշ» կինոնկար -

օպերայի ժապավենը, պոեմի նկարագարդումներ, մեծ թղթեր, գունավոր ներկեր (մարկերներ):

Կիրառվող մեթոդներ- մտագրոհ, խմբային հետազոտություն, տեքստային աշխատանք,ինքնուրույն ստեղծագործական աշխատանք, հարցազրույց:

Դասի ընացքը- կիրառվում է ԽԻԿ համակարգը

Խթանում. երկու քայլից է (կարելի է կիրառել կա՝մ մեկը, կամ մյուսը)

ա) կիրառվում է մտագրոհ, գրատախտակին գծված շրջանակի մեջ գրվում է **կերպար** բառը:

Շուրջը գրանցվում են սովորողների բոլոր ասածներն անխտիր:

բ) Ուսուցիչն ասում է, որ հիմա լսելու են Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի նախերգանքը:

Առաջարկում է լսել և հետևել պոեմի (տպագիր) նախերգանքին:

Ավարտից հետո հարց է ուղղում. «Ո՞ւմ էր ներկայացնում հեղինակն այս Նախերգանքում և ինչո՞ւ»: Մի քանի կարծիքներ լսելուց հետո անցնում են ԽԻԿ համակարգի հաջորդ փուլին:

Իմաստավորում (ուշադրություն. այս փուլի անցկացման համար կարելի է նախօրոք աշակերտներին հանձնարարություններ տալ. պոեմից գտնել Անուշին, Սարոյին, Մոսիին, Անուշի և Սարոյի մայրերին, հեղինակին, գյուղացիներին ներկայացնող հատվածները)

Այս փուլում կիրառվում է **խմբային հետազոտության** մեթոդը: Դասարանը բաժանվում է վեց խմբի. կարելի է կիրառել պոեմի «Նախերգանքի» վեց քառատողերը, որոնց ամեն մի տողը գրված կլինի առանձին թերթիկների վրա, սովորողները պիտի գտնեն իրար և կազմեն տվյալ տունը: Այսպես ձևավորվում է վեց խումբ: Խմբերի բաժանման ընթացքում հնչում է «Անուշ» օպերայից խմբերգ («Ամպի տակից» կամ «Համբարձում յայլա»):

Ուսուցիչը նախօրոք մեծ պաստառի վրա պիտի գծած ունենա (կարելի է աշխատեցնել գծագրական կամ նկարչական շնորհք ունեցող աշակերտի) կերպարի բնութագրման քայլերը.

ա) հերոսի արտաքին նկարագիրն ըստ պոեմի. բերվում են համապատասխան օրինակներ, որտեղ նկարագրվում է հերոսը: Եթե պոեմում բացակայում են տվյալ հերոսի արտաքին նկարագրությունները, պիտի առաջնորդվել երևակայությամբ.

հերոսի արտաքինն իմ պատկերացմամբ: Հերոսի բնավորությունն, ըստ պոեմի, հիմնականում շեշտադրվում են սիրելու, ներելու, վրեժխնդիր լինելու, սիրո համար

պայքարելու, ադաթի գերին լինելու, սովորույթները մարդուց վեր դասելու, մեծահոգության, փոքրոգության դրսևորումների մասին:

Ուսուցիչն առաջարկում է ուշադիր դիտել տրվող գծապատկերը, ապա ամեն խմբի բաժանում է առաջադրանքները, որոնք գրանցված են թերթիկների վրա: Ուսուցիչը զգուշացնում է նաև, որ խմբի կարծիքը կարող է ներկայացվել նաև գծապատկերի, նկարազարդման կամ համապատասխան մեղեդու զուգորդությամբ, օրինակ՝ Անուշին կամ Սարոյին ներկայացնելիս կարելի է օպերայից համապատասխան մեներգերը միացնել կամ երգել, եթե դասարանում կան լավ երգողներ:

1–ին առաջադրանք (1-ին խումբ). բնութագրել Անուշին:

2-րդ առաջադրանք (2-րդ խումբ). բնութագրել Սարոյին:

3-րդ առաջադրանք (3-րդ ժումբ). բնութագրել Մոսիին (կարելի է նաև Անուշի հորը):

4րդ առաջադրանք (4-րդ խումբ). բնութագրել Անուշի և Սարոյի մայրերին:

|5-րդ առաջադրանք (5-րդ խումբ). բնութագրել հեղինակին:

6-րդ առաջադրանք (6-րդ խումբ). բնութագրել գյուղի (ժողովրդի ներկայացուցիչներին. ծերունին, որ պատմում է Անուշին և Սարոյին տեսնելու մասին, հարսանիքի տեսարաններում ներկայացվող անանուն մարդիկ): Այս աշխատանքի համար տրվում է 15 րոպե, ուսուցիչն անցնում է խմբից խումբ, հետևում աշխատանքի ընթացքին (Հուշում. 1 . որպեսզի աշխատանքը լավ ստացվի, սովորողները անխտիր տանը պիտի

աշխատած լինեն, ունենան ամեն հերոսին բնութագրող հատվածներ, եթե դրանք դուրս գրած էլ չլինեն, գոնե աշխատանքային տետրերում պիտի նշումներ ունենան.

2. այս փուլում դեռ չի կարելի օգտվել գրականության դասագրքերից, դա կխանգարի |սովորողների ինքնուրույնությանը. դասագիրքից կարդալը հանձնարարվելու է որպես տնային աշխատանք կամ հաջորդ դասի թեմա):

Ժամանակը սպառվելուց հետո ամեն խումբ 5 րոպեի ընթացքում ներկայացնում է իր կատարած աշխատանքը: Մյուս խմբերը լսում և հարցեր են ուղղում ընկերներին:

Կշռադատման փուլ- Ինքնուրույն ստեղծագործական աշխատանք. սա տրվում է սովորողների ստեղծագործական կարողությունների և խոսքի զարգացման համար:

Աշխատանքները ներկայացվում են գրատախտակին կամ մեծ պաստառի վրա գրված

ա) գրել նամակ կա՛մ Անուշին, կա՛մ Սարոյին, կա՛մ Մոսիին. գրել նամակ Հովհաննես Թումանյանին

գ) մշակել հարցազրույց Հովհաննես Թումանյանի հետ.

դ) գրել կարծիք պոեմի սիրած հերոսի մասին,

ե) շարադրանք՝ «Եթե Անուշն ապրեր մեր օրերում» վերնագրով։

Կշռադատման փուլի առաջադրանքները կարող են տրվել որպես տնային աշխատանք, բայց ժամանակ պիտի հատկացվի դրանք բացատրելուն և ներկայացնելուն։ Իսկ եթե այս թեմային տրամադրվելու է երկու դասաժամ, ապա ստեղծագործական աշխատանքի ուրվագիծն են անում դասարանում, իսկ տանը շարադրելու են ավելի ընդարձակ ձևով։

Տանը նաև պիտի կարդան գրականության դասագրքի վերլուծությունները և համեմատեն իրենց խմբային աշխատանքի արդյունքի հետ, հայտնեն կարծիք կամ համաձայնություն (անհամաձայնություն) դասագրքի հեղինակի դատողություններին. սա արդեն հաջորդ դասի

Թեման կլինի։

Ամփոփում- պատասխանել հետևյալ հարցին. Ի՞նչ է սովորեցնում գրական կերպարի վերլուծությունը։

Դասն ավարտել «Անուշ» օպերայի նախերգանքի հնչյուններով։

Եզրակացություն

Հովհաննես Թումանյանի «Անուշ»-ը՝ քնարաէպիկական պոեմի գլուխգործոցներից մեկը, ընդարձակելով իր ազգային բովանդակության ու ձևի սահմանները, ձեռք է բերել համամարդկային բովանդակություն։ Պոեմի սրտառուչ սյուժեն, անզուգական բնապատկերները գրավում են ընթերցողին, տեղափոխում նրան հերոսների ցավերով լի աշխարհը՝ դեպի չքնաղ Լոռին, ուր հավիտյան ապրում է Անուշի ու Սարոյի մեծ սերը։

Պոեմի ուսումնասիրությունը ակտիվ մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են՝ մտագրոհը, խմբային հետազոտությունը , ստեղծագործական աշխատանքը, հերոսներին բնութագրող աղյուսակը, հարցազրույցը, հանգեցրեց այն եզրակացության, որ այդ մեթոդների արդյունավետությունը տեսանելի և շոշափելի արդյունք է ապահովում, ինչպես նաև ապահովում է բոլոր աշակերտների ներգրավվածությունը ուսուցման գործընթացում քննադատական մտածողության, համագործակցային կարողությունների ու հմտությունների ձեռքբերումը։ Աշակերտները մեծ հետաքրքրությամբ են ուսումնասիրում նոր ուսուցանվող նյութը, ձեռք են բերում կայուն գիտելիքներ թեմայի վերաբերյալ, կարողանում են ինքնուրույն եզրահանգումներ անել։ Աշակերտները բավականություն են ստանում կատարած աշխատանքից, իսկ դա ուսուցչի համար կարևոր նախադրյալ է՝ նորը միշտ փնտրելու և ուսուցանելու գործում։

Տարբեր մեթոդների, եղանակների ու միջոցների բազմազանությունը կնպաստի բոլոր աշակերտների մասնակցությանը դասին։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ավետիսյան Յու., Զաքարյան Հ.,Քրեստոմատիա, Երևան 2007թ.:

2.Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հատոր 3-րդ , Երևան 1989թ.:

3.Թումանյան Հ., Ընտիր երկեր , հատոր 1-ին , <<Սովետական գրող>> հրատարակչություն, Երևան 1985թ.:

4.Ինճիկյան Ա., Հովհաննես Թումանյան , ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն , Երևան,1969թ.:

5.Հախվերդյան Լ., Թումանյանի աշխարհը , <<Հայաստան>> հրատարակչություն ,

Երևան, 1966թ.:

6.ՀՀ ԿԳՆ կրթական ծրագրերի կենտրոն, հանրակրթական ավագ դպրոցի առարկայական

չափորոշիչներ և ծրագրեր ,Երևան, 2009թ.:

7. Միրզոյան Լ., Հայոց լեզուն և հայ գրականությունը դպրոցում , Երևան,1969թ.:

8.Ջուհարյան Թ.Գ., Հայ գրականության մեթոդիկա, Երևան, 1980թ. :